ԿԱՐԾԻՔ

ՌՈՒԶԱՆՆԱ ԷԴՎԱՐԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ «ՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ թեմայով ԺԳ. 00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Մանկավարժական տեխնոլոգիաների կիրառությունը ուսուցման /ուսումնառության գործընթացում, թերևս, ենթադրում է գործողությունների ամբողջական համակարգ, որի նպատակը մանկավարժական այս կամ այն խնդրի լուծումն է: «Մանկավարժական տեխնոլոգիան» կարող է դիտարկվել նաև, որպես նախօրոք պլանավորված, համակարգված և հաջորդական մանկավարժական գործընթացի իրականացում կամ՝ ուսուցման և դաստիարակության նպատակներով կիրառվող աշխատանքային «գործիքների» ամբողջություն:

Մանկավարժական տեխնոլոգիաները մի դեպքում բխում են տեսությունից, մյուս դեպքում՝ սկիզբ են առնում պրակտիկայից: Ցանկացած դեպքում դրանց արդյունավետ կիրառությունը ենթադրում է հստակ նպատակներ, այդ նպատակներին հասնելու հստակ միջոցներ, որոշակի կայուն կանոններ, թե ինչպես կիրառել դրանք դրված կրթական նպատակներին հասնելու համար:

Յուրաքանչյուր տեխնոլոգիայի կիրառման դեպքում անհրաժեշտություն է առաջանում հետևելու դրա գործադրման նպատակահարմարությանն ըստ կրթության բովանդակության, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների, ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևի:

Ահա այս հիմքով ենք կարևորում ատենախոսի կողմից հումանիտար կողմնորոշման անգլերենի դասընթացներում գեղարվեստական տեքստի շուրջ

աշխատանքի առանձնահատկությունները բացահայտելու և օտարալեզու մասնագիտական կողմնորոշման տեքստերի վերլուծության ուսուցման տեխնոլոգիաների կիրառման մեթոդական համակարգ մշակելու նպատակադրումը:

Հեռանկարի տեսանկյունից խոսքը վերաբերվում է սովորողի կողմից սեփական ուսումնառության նկատմամբ պատասխանատվություն կրելուն, ապագա մասնագիտական գործունեությունը առավել մոտիվացված և արդյունավետ դարձնելուն, ուսման նկատմամբ հետաքրքրությունը պահպանելուն և խորացնելուն՝ դրան հարիր, ժամանակակից տեխնոլոգիաներ ու ռազմավարություններ կիրառելուն:

Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է ատենախոսի կողմից արվող այն շեշտադրմամբ, որ «...անհրաժեշտություն կա հստակեցնելու տեքստի վերլուծության ուսուցման նպատակը, խնդիրները հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից...»:

«Ապագա բանասերները պետք է շեշտը դնեն ոչ միայն օտարալեզու մասնագիտական տեքստը ընթերցելու, հասկանալու, ներկայացնելու, թարգմանելու, գեղարվեստական, բանասիրական, ոճաբանական մակարդակներում վերլուծելու, այլև նրա միջոցով անգլերենի բառապաշարը, քերականությունը, հնչյունական համակարգը յուրացնելու վրա»:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Հետազոտության ներածության մեջ ձևակերպված է հետազոտության նպատակը, հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, խնդիրները՝ որոնցից ուզում ենք առանձնացնել մասնավորապես: Ներկայացված են նաև հետազոտության մեթոդաբանական հիմքերը, հետազոտության գիտական նորույթը, որտեղ նշված է, որ մշակվել է օտարալեզու մասնագիտական կողմնորոշման տեքստերի վերլուծության ուսուցման անձնակենտրոն, ոչ խաղային և խաղային, հաղորդակցական, մոդուլային, քննադատական մտածողության զարգացման ինչպես նաև տեքստի թարգմանության և վերլուծության (կանոնների վրա հիմնված, վիճակագրական, հիբրիդ,

կաղապարահեն) ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման մեթոդական համակարգ:

Հետազոտության տեսական, գործնական նշանակությունը, Հետազոտության փորձարարական բազան և պաշտպանության ներկայացվող դրույթները, ինչպես նաև Գիտահետազոտական աշխատանքի իրականացման փուլերը ևս տեղ են գտել ներածության մեջ:

Հետազոտության առաջին՝ «Տեքստի վերլուծության հիմնախնդիրը հումանիտար կողմնորոշման անգլերենի բուհական դասընթացում» գլխուը նվիրված է անգլերենի հումանիտար կողմնորոշման բուհական դասընթացի, նրա նպատակի, խնդիրների, տեքստի նախաթարգմանական, ոճաբանական վերլուծության ուսուցման տեխնոլոգիաների ներկայացմանը:

Երկրորդ՝ «Տեքստի նախաթարգմանական վերլուծության ուսուցման տեխնոլոգիաները բանասիրական կողմնորոշման դասընթացում» ենթագլխում ներկայացվում են այն մոտեցումները, որոնք վերաբերում են տեքստի վերլուծության տեխնոլոգիաներին և ընթացակարգերին:

Նշվում է, որ «տեքստի վերլուծության /հասկանալու, թարգմանության, վերարտադրելու/ առաջին գործառնությունը /օպերացիա/ նրա ընթերցումն է: Բուն ընթերցումը հիմնականում վերլուծական է...»:

Երկրորդ «Տեքստի վերլուծության ուսուցման ռազմավարությունները և մշակված կաղապարի արդյունավետության փորձարարական հիմնավորումը» գլխում ներկայացվում են վերլուծական ընթերցանության ուսուցման տեխնոլոգիաների մանկավարժական պայմանները, գծագրական դասակարգիչների կիրառման ռազմավարությունները: Այս գլխի երրորդ՝ «Տեքստի վերլուծության ուսուցման կաղապարի արդյունավետության փորձարարական հիմնավորում» ենթագլուխը նվիրված է փորձարարական ուսուցման գործիքակազմը, ընթացքը և արդյունքները ներկայացնելուն:

Ընդունելով ատենախոսության հեղինակ Ռուզաննա Էդվարդի Գևորգյանի կողմից իրականացված ուսումնասիրություններնի, վերլուծությունների և հետազոտական աշխատանքի կարևորությունը, հարկ ենք համարում ներկայացնել որոշ դիտողություններ, որոնց առկա չլինելու հանգամանքը, մեր կարծիքով, առավել շահեկան կլիներ սույն ուսումնասիրության համար: Այսպիսով.

1. Վերնագրից ելնելով, կարծում ենք, անհրաժեշտություն կա հստակ մեկնաբանելու «տեքստի վերլուծության ուսուցման տեխնոլոգիա» գաղափարը սույն ուսումնասիրության համատեքստում: Այն կիրառված է որպես առանձին մեթոդների շարք (հնար, մեթոդ, տեխնոլոգիա, ռազմավարություն), թե որպես համակարգ, որտեղ ներառվում են մեթոդներ, հնարներ, ուսուցման կազմակերպման և ստուգման-գնահատման համապատասխան ձևեր՝ որպես մեկ ամբողջություն:

2. Հետազոտական աշխատանքում հեղինակի կողմից շեշտվում է «ուսուցման տեխնոլոգիաների կիրառման մեթոդական համակարգ» գաղափարը (այդ թվում հենց ուսումնասիրության նպատակն ու հետազոտության նորույթն են դա արձանագրում, էջ 4) ապա քննարկման է դրվում «...տեքստի վերլուծության ուսուցման օրինակելի, արդյունավետ կաղապարը» (երկրորդ գլուխ, էջ 76): Սակայն պարզ չէ, թե հեղինակի կողմից, որ գաղափարն է որպես ուսումնասիրության արդյունք վերլուծվում և ներկայացվում:

3. Հեղինակը շեշտում է, որ «...անհրաժեշտություն կա հստակեցնելու տեքստի վերլուծության ուսուցման նպատակը, խնդիրները հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից...»: Սակայն աշխատանքում ներկայացված են գծագրական դասակարգիչների կիրառություններ, ՔՄԶԿԳՄ կամ այլ ռազմավարություններ, և պարզ չէ, թե ինչպես, ինչ հիմքով են դրանք փոխկապակցվում՝ ի նպաստ գեղարվեստական

տեքստերի վերլուծական կարողությունների ձևավորման: Կարելի է ասել, բացակայում է ուսուցման ռազմավարական, տեխնոլոգիական ամբողջական համակարգը, որն ուղղված է սովորողների հաղորդակցական կոմպետենցիայի զարգացմանն ու դրսևորմանը:

4. Պարզ չեն հեղինակի կողմից իրականացված ստուգողական և ձևավորող գիտափորձի արդյունքների շուրջ ներկայացված տրամագրերն ու աղյուսակները (էջ՝ 112, 113, 114...), որոնցում ամրագրված են որոշակի կարողություններ, սակայն բավարար չեն ձևավորող գնահատման համար անհրաժեշտ տվյալներն ու վերլուծությունները, այն է՝ հասկանալ սովորողի յուրացման մակարդակը ժամանակի որոշակի հատվածում, որպեսզի տեղեկություն ստացվի այն մասին, թե ինչպես պետք է կատարելագործել ապագա յուրացումը: Ուստի մեր կարծիքով, բավարարաչափ հիմնավորված չէ փորձարարական ուսուցման արդյունավետությունը:

5. Կարծում ենք, աշխատանքում կարիք կար անդրադառնալու առաջարկվող «Օտարալեզու տեքստի վերլուծության ուսուցման կաղապարի» (էջ 102) քննարկմանը գործառութային և կիրառական տեսանկյուններից: Պարզ չէ, թե ի՞նչ հիմքով են առաջարկվող կաղապարի «Տեսություններ» բաժնում իրարից անջատ թվարկված՝ «մանկավարժականը, դիդակտիկականը, մեթոդականը»:

6. Կարծում ենք, որպես վրիպում պետք է արձանագրել աշխատանքի բովանդակության մեջ «Եզրակացություն» գլուխը չնշելու փաստը, որն աշխատանքում ևս պատշաճ ներկայացնելու կարիք ուներ: Անհրաժեշտ էր

հստակեցնել՝ էջ 125-ում զետեղված եզրակացությունները վերաբերվում են տվյալ գլխին, թե ամբողջ հետազոտությանը:

7. Ատենախոսի կողմից հետազոտական խնդիրներ լուծելու նպատակով ուսումնական տարբեր առաջադրանքներ են կիրառվել, սակայն, կարծում ենք առաջադրանքների նկարագրությունները ճիշտ կլիներ տեղադրել հավելվածներում, իսկ դրանց արդյունքների վերլուծությունները ներկայացնել համապատասխան գլխում (էջ՝ 105-119):

8. Աշխատանքում նկատելի են տեխնիկական վրիպումներ կապված գրականության և հղումների հետ՝ մասնավորապես տողատակով հղումներ կան օրինակ 56-րդ և 62-րդ էջերում:

Ռուզաննա Էդվարդի Գևորգյանի «Տեքստի վերլուխության ուսուցման տեխնոլոգիաներն անգլերենի հումանիտար կողմնորոշման դասընթացներում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի կողմից ԺԳ. 00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Ընդդիմախոս՝ մ. գ. թ. Ա.Պ. Արնաուդյան

Ա.Պ. Արնաուդյանի ստորագրությունը հաստատում եմ
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»
հիմնադրամի գիտական քարտուղար՝ Հ.Հ. Փիլավջյան

16. 10. 2020թ.